О ПРОБЛЕМАХ ИЗУЧЕНИЯ КУЛЬТУРЫ АРМЯНСКОГО КОВРОТКАЧЕСТВА ДЕРСИМА И ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ РЕГИОНА

А. А. Погосян

Этнографические материалы конца 19-ого и начала 20-ого вв. показывают, что среди армян и курдов Дерсима было развито ковроткачество. При выявлении местных особенностей ковроткачества армян, нами уделено особое внимание к вопросу происхождения курдов Дерсима. В частности, это касается племенных групп «заза» и «кзылбаш», у которых широко присутствуют религиозные и культурные традиции, присущие армянам. Нами учтен и фактор скрытых армян, которые живут как в Дерсиме, так и в других регионах современной Турции. Имея в виду эти особенности, мы сочли возможным, при изучении ковроткачества армян и выявления характерных им типов ковров, среди прочих первоисточников, использовать также материалы местного курдского коврокачества, в частности, племенных групп «заза» и «кзылбаш».

ABOUT THE PROBLEMS OF THE STUDY OF ARMENIAN RUG-WEAVING CULTURE OF DERSIM AND THE PECULIARITIES OF THE ETHNOGRAFICAL OBSERVATION OF THE AREA

A. A. Poghosyan

Ethnographical observations among Dersim Armenians and Kurds referring to the end of the 19-th and beginning of the 20-th century, witness, that rug-weaving was rather developped there. In revealing the local peculiarities of Armenian rug-weaving culture, Dersim Kurds geneological elucidation is of pivotal meaning. Among the Dersim Kurds are the so called “zaza”, and “kzlbash” ethnic groups, who in religious and cultural meaning bear the influence of Armenians typical traditions. Besides, “hidden” Armenians also make a substantial group. Taking into consideration all these, observing Dersim Armenians rug-weaving culture, as a source we have also included local Kurds, particularly, rug-weaving traditions typical to zazas and kzlbashes.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
Տ. Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայոց գորգագործական մշակույթի պատմությունը թեև ընդհանուր առմամբ ուսումնասիրված է, սակայն գորգագործական կենտրոնների մեծ մասի վերաբերյալ մեր ունեցած պատկերացումները ընդհանրական են ու հստակեցված չեն: Մասնավորապես, բացահայտված չեն դրանց բնորոշ գորգերի տիպերն ու մանավանդ դրանց ծագումնաբանությունը: Այս առումով առանձնանում է նաև Սևանի ավազանը, որը լինելով գորգագործական ավանդույթներով հարուստ տարածաշրջան, այդուհանդերձ, սկզբնաղբյուրների բացակայությունն ու դաշ-

Տապանաքար՝ գորգապատկերով, Նորատուս (պատկ. 1):

տային ազգագրական աշխատանքների անբավարար լինելը առայժմ հնարավոր չեն դարձնում խնդրո առարկա հարցերի մասին ամբողջական պատկերացում կազմելը: Սույն հաղորդմամբ, որն ըստ էության ոլորտի ուսումնասիրման առաջին փորձն է դառնում, կանդրադառնանք միայն պատմական Գեղարքունիքի գորգագործական ավանդույթներին: Գեղարքունիքի տարածաշրջանն ունեցել է պատմական ու ժողովրդագրական բուռն զարգացումներ, որոնք, անտարակույս, իրենց կնիքն են թողել տեղի մշակութային համալիրների ձևավորման հարցում: Նկատի ունենալով այս խնդիրների առկայությունը, տարածաշրջանին բնորոշ գորգերի տիպերի բացահայտման հարցում կարևորել ենք հենց այդ գործոնները:

Տարածաշրջանի գորգագործական մշակութային ավանդույթների մասին: Սևանի ավազանը ներառում է պատմական Սյունիքի գավառները, որոնք մշակութային կյանքի երբեմնի ծաղկուն կենտրոններն էին ու մեր ժամանակներում էլ կանգուն են ու կան դրա վկայությունները՝ միջնադարին վերաբերող ճարտարապետական կառույցներ, ձեռագիր հուշարձաններ, կիրառական արվեստի առարկաներ և այլն: Ընդ որում՝ խեցեգործության, փայտի գեղարվեստական մշակման, մետաղագործության վերաբերյալ եղած վաղ տվյալները հարուստ են ու բազմաբնույթ և վերաբերում են դեռևս մթա. 4-3-րդ հազարամյակներին: Տարածաշրջանը նաև անասնապահական ու երկրագործական մշակույթի կենտրոն է, ու այդ ամենն էլ մեզ հիմք է տալիս ասելու, որ ի շարս դրանց, անտարակույս, այստեղ հայտնի է եղել նաև ոստայնանկությունը, համենայնդեպս՝ հայտնաբերված ոստայնանկի աշխատանքային գործիքների մեծաքանակ նմուշների առկայությունը վկայում է դրա զարգացած լինելու մասին:

Զարգացած և ուշ միջնադարյան ժամանակաշրջանի Գեղարքունյաց գորգագործական մշակույթի նկարագրի մասին պատկերացում ստանալու համար կարևոր են *Նորատուսի տապանաքարերը*, որոնց, մասնավորապես 14-17-րդ դարերին վերաբերողների, գեղազարդման մանրամասները առնչվում են գորգերին բնորոշ գեղազարդման ավանդույթներին: Հարկ է նկատել, որ խաչքարերի գեղազարդման մանրամասերի թվում գորգարվեստին աղերսվում են հատկապես դրանց եզրագոտիներն, ու Նորատուսի խաչքարերի պարագայում էլ առաջին հերթին ակնհայտ են այդօրինակ դրսևորումները: Սակայն, դրանցից բացի, կան նաև գորգագապատկերներ, որոնք ընդգծված են ծոպերի առկայությամբ և գեղազարդված են վարդակներով ու շեղանկյունատիպ երկարավուն խոշոր հորինվածքներով /պատկեր 1/[1]: Տապանաքարերից մեկին պատկերված է գորգ, որին նստած են երաժիշտները[2]: Դրանք բոլորն էլ կարևոր են Սևանի ավազանի

[1] ***Տ. Մկրտչյանի*** արխիվ, տետր 3, Գեղարքունիքի գիտարշավ, 1986-87 թթ., էջ 28 /հետայսու՝ Տ. Մկրտչյանի արխիվ:

[2] ***Տ. Մկրտչյանի*** արխիվ, էջ 46:

Գորգ «Վայք», Գեղարքունիք, 19-րդ դ. վերջ /պատկ. 2/:

ու մանավանդ Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ուշ միջնադարյան ավանդույթների մասին պատկերացում ստանալու հարցում:

Խնդրո առարկային վերաբերող կարևոր տեղեկություններ կան նաև տարածաշրջանի տնտեսական մշակույթին ու արհեստներին վերաբերող 19-րդ դարում արված վիճակագրական կարգի ուսումնասիրություններում:

Այս առումով բավականաչափ հետաքրքրություն են ներկայացնում Նոր Բայազետի գավառում Ա. Պարվիցկու և Ա. Տեր-Մարկարովի կողմից 1880-90-ական թվականներին արված դիտարկումները: Ա. Տեր-Մարկարովի հավաքած տեղեկությունների համաձայն, գորգագործական նշանավոր կենտրոնի համբավ ուներ Գյոզալդարան /ներկայումս՝ Վարդենիկ/, ուր գործում էին գործվածքի զանազան տեսակներ, այդ թվում՝ գորգեր ու կարպետներ, ընդ որում, այդ նպատակով հիմնականում օգտագործվում էին բնական ներկանյութերով ներկված թելեր: Հաղորդելով այդ ամենի մասին, Տեր-Մարկարովը նշել է նաև, որ տներում կային հատուկ պահոցներ՝ ծալքեր, որոնցում պահում էին գորգերն ու մյուս գործվածքները[3]: Նոր Բայազետի գավառի հարավ-արևմտյան մասի գյուղերի վերաբերյալ այդ նույն նկարագիրը ներկայացնում է Ա.Պարվիցկին[4]:

Գեղարքունիքի գորգագործական մշակույթի մասին բավականին տվյալներ է հաղորդում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցը: Դրանք վերաբերում են գորգերի գործածման ոլորտներին, դրանց տեսականուն ու նույնիսկ գեղազարդման առանձնահատկություններին: Մասնավորապես, նա հաղորդում է Նոր Բայազետում հարսանյաց արարողությունների ժամանակ գորգերի գործածման, հատակն այդ ընթացքում գորգերով ու թաղիքներով ծածկելու մասին: Նա նշում է գորգը հարսի օժիտի կազմում լինելու մասին[5]: Բասարգեչարի մասին էլ /ներկայումս՝ Վարդենիս/ հաղորդում է, որ այդտեղ կանայք «գործում են խալիչա և կարպետ, և իրենց որդւոց և մարդկանց համար ամեն բրդե զգեստ, ինչպես Երնջակի գաւառացիք»[6]:

20-րդ դարի սկզբներին Գեղարքունիքում կոնկրետ միջոցառումներ են իրականացվում տեղական բրդի հումքը գորգագործության զարգացմանն ուղղելու համար: Մանավանդ, հարևան տարածաշրջաններում արդեն առկա էր Կովկասյան տնայնագործական կոմիտեի կողմից ծավալած աշխատանքների փորձը, որի արդյունքում մի շարք խոշոր բնակավայրերում ստեղծվել էին գորգագործա-

[3] *А. Тер - Маркаров,* Село Гезалдара. СМОМПК, вып.17, Тифлис, 1893, с.107- 117.

[4] *А. В. Парвицкий,* Экономоческий быт государственных крестьян юго-западной части Новобаязетского уезда Эриванской губернии, т.1, Тифлись, 1885, с. 343-344.

[5] Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, էջ 465:

[6] Նույն տեղում, էջ 604:

կան փոքր ձեռնարկություններ, ուր պատրաստի գորգանկարների օրինակով վաճառքի համար գործում էին գորգերի խմբաքանակներ: Ինչպես պարզել է պրոֆեսոր Համլետ Հարությունյանը, Նոր Բայազետում 1901 թվականին ստեղծվում է մի ընկերություն, որը տեղում բրդի պաշարները օգտագործելու ու գորգագործությունը զարգացնելու նպատակով, Գեղարքունիքի մի շարք բնակավայրերում հիմնում է գորգագործական մանուֆակտուրաներ[7]: Դրանցում ներգրավված գորգագործուհիներին տրամադրվում էր հումք ու համապատասխան գորգանկարներ, կցվում են համապատասխան մասնագետներ, որոնք էլ կազմակերպում են դրանց աշխատանքները: Արտադրված գորգերն էլ մատչելի գներով գնում էր այդ նորաստեղծ ընկերությունն ու կազմակերպում դրա իրացման հետագա գործընթացները: Արդեն 1913 թվականին այդ մանուֆակտուրաներում աշխատում էր շուրջ 710 գորգագործուհի[8]:

Գորգ «Ոսկանապատ», Գեղարքունիք, 19-րդ դ. վերջ /պատկ. 3/:

Տարածաշրջանի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի տիպերի ու դրանց գեղազարդման առանձնահատկությունների վերաբերյալ մեր պատկերացումները շատ ավելի հստակ են դարձնում 19-րդ դարի երկրորդ կեսին ու 20-րդ դարին վերաբերող ազգագրական նյութերը: Այս առումով էլ արժեքավոր են 1983-2005 թթ. Հայաստանի ազգագրության պետական թանգարանի կազմում եղած Գեղարվեստական գործվածքի բաժնի կատարած դաշտային աշխատանքները: Մասնավորապես, սույն աշխատանքի իրականացման հարցում կարևոր են այդ բաժնի գիտաշխատող Տիգրանուհի Մկրտչյանի 1986-87 թվականներին կատարած դաշտային ազգագրական հետազոտությունները: Մենք օգտագործել ենք նաև Սևանի ավազանից ձեռք բերված ու Հայաստանի թանգարաններում, մասնավորապես Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, պահվող գորգերի ու կարպետների նմուշներին վերաբերող ծագումնաբանական տվյալները:

Ժողովրդագրական առանձնահատկությունները: Գեղարքունիքի ու ընդհանրապես Սևանի ավազանի մշակույթի առանձնահատկությունները հիմնականում պայմանավորված են 16-18-րդ դարերում տեղի ունեցած աշխարհաքաղաքական անցուդարձերով, որոնց արդյունքում այստեղ աստիճանաբար հաստատվում են մահմեդական տարատեսակ ցեղեր: Շուշիում Փանահ խանն ու նրա հաջորդները, ազգակից մահմեդական ցեղերով իրենց շրջապատելու ձգտումով, ավելի ծավալուն ու նպատակային են դարձրել այդ գործընթացները: Մասնավորապես՝ այդ նպատակով էր Իբրահիմ խանի կանչով Արարատյան դաշտավայրից Գեղարքունիք ու Ծար տեղաշարժվել քրդական քոլանի ցեղը[9]:

---

[7] *Հ. Հարությունյան,* Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ, Եր., 2008, էջ 215-216:

[8] Նույն տեղում, էջ 216:

[9] *А. Р. Иоанннисян,* Иосиф Эмин, Ер.,1989, с. 171-173:

Գեղարքունիքում 16-17-րդ դարերում կային մի քանի մելիքություններ, որոնց թվում աչքի ընկնողը Շահ Աբաս 1-ինի հրովարտակով Երևանի խանությունից անկախ ճանաչված Մելիք-Շահնազարյանների Սոդքի մելիքությունն էր, որին էլ ենթարկվում էին տեղի ավելի փոքր իշխանությունները: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցի ունեցած տվյալների համաձայն՝ Շահ Աբաս 1-ինի տված ու նրա հաջորդների կողմից հաստատված այդ հրովարտակի համաձայն՝ նրանց էին պատկանում Դրախտիկից Ադիյաման ընկած գյուղերը: Այս տեղեկությունները վերաբերում են Մելիք-Շահնազարյանների մինչ այդ Պարսկաստան անցած մի ճյուղին՝ Մելիք Շահնազարի որդի մելիք Յավրուն, որին հնարավորություն տրվեց Գեղարքունիքից Պարսկաստան բռնագաղթածների հետ միասին վերադառնալ իրենց հայրենիք[10]: Մելիք- Շահնազարյանների նստավայրը Մեծ Մազրա գյուղն էր, որոշ ժամանակ էլ այդպիսին եղել է Զոդ ավանը: Այս մելիքությունը հարևան էր Ծարի մելիքությանը /ներկայիս Քարվաճառի տարածաշրջան/ և այս երկուսն էլ հայերից մասամբ դատարկվեցին Ցիցիանովի արշավանքի անհաջող ավարտից հետո[11]: Սակայն այդ գործընթացներն սկսվել էին դեռևս 17-րդ դարի սկզբներից. աշխարհաքաղաքական անբարենպաստ պայմաններից դրդված տեղաբնիկներն աստիճանաբար լքել են տարածաշրջանն ու հաստատվել այլ վայրերում, այդ թվում՝ Արցախում, Վրաստանում և այլուր: 17-րդ դարի վերջերին ու 18-րդ դարի սկզբներին Գարդման ու Վարանդա են տեղափոխվում Մելիք-Շահնազարյանները, իսկ տեղում մնացածներն էլ 1790-ականներից սկսած՝ մինչ ռուսների առաջին արշավանքը, Երևան «փախեալ գնացին ի Վրաստան և նահանգն Գեղարքունի իսպառ մնաց ավերակ»[12]: Մեր ուսումնասիրության նյութի առումով կարևոր է այն, որ դեռևս Շահ Աբաս 1-ինի ժամանակներից Մելիք-Շահնազարյանների մի ճյուղն էլ մինչ այդ հաստատված էր Գարդմանում ու մելիքության կենտրոնատեղին էլ Ոսկանապատ գյուղն էր[13]: Բացի դրանից, այդ ճյուղին էին պատկանում նաև Բրաջուր, Մուռութ և Միրզիկ գյուղերը[14]: 1603 թվականից էլ այս մելիքության

Գորգ «Կոգովիտ», Գեղարքունիք, 19-րդ դ. վերջ /պատկ. 4/:

[10] ***Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց,*** Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ. գրեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի միաբան սուրբ էջմիածնի /ի1862 թուին ց 1895 թիւն/, Վաղարշապատ, 1896, էջ 793, Գեղամա մելիք Շահնազարի Պարսկաստան անցնելու մասին տես նաև՝ ***Աշոտ Հովհաննիսյան,*** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 72-73:

[11] Այս մասին տես՝ ***Հակոբյան Թ.***,Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984, էջ 364 - 365:

[12] ***Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց,*** էջ 796:

[13] ***Թ. Հակոբյան***, նշվ. աշխ., էջ 365:

[14] Տես՝ ***Եր. Լալայան***, Երկեր հինգ հատորով, հատոր 2, Գանձակի գավառ/ Նյութեր ապագա ուսումնասիրության համար/, պատ. խմբագիր Դ. Վարդումյան, Եր., 1988, էջ 256:

մի ճյուղը տեղափոխվել էր Վարանդա ու հաստատվել Ավետարանոց գյուղում[15]: Բնական է ենթադրել, որ այդ տեղաշարժերի շնորհիվ Գեղարքունյաց մշակութային ավանդույթներն այս կամ այն չափով պետք է տեղայնացվեին նաև Մելիք-Շահնազարյանների բնակության այդ նոր վայրերում ևս:

Սևանի ավազանի, այդ թվում Գեղարքունիքի, հայերով վերաբնակեցումը սկսվեց 1830-ական թվականներին ու հաջորդ տասնամյակներում: Այդտեղ հաստատվեցին Բայազետից, Դիադինից, Ալաշկերտից տեղափոխված հազարավոր հայ ընտանիքներ, որոնք բնակության այս նոր վայրերում էլ շարունակել են զարգացնել իրենց բնորոշ գորգագործական ու կարպետագործական ավանդույթները[16]: Մեր ուսումնասիրած թեմայի առումով կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հին Բայազետից տեղափոխվածները բնակություն հաստատեցին ներկայիս Գավառի շրջանում, ալաշկերտցիները՝ Մարտունու շրջանում, դիադինցիները՝ Վարդենիսի շրջանում, բայազետցիների ու ալաշկերտցիների մի մասն ու Խոյից ու Սալմաստից եկածներն էլ՝ Սևանի շրջանում:

Վերը շարադրվածներից հետևում է, որ գործնականում չափազանց բարդ է Սևանի ավազանի հայոց գորգագործական կենտրոններին բնորոշ միջնադարյան ավանդույթների ու մանավանդ գորգերի և կարպետների կոնկրետ տիպերի բացահայտումը: Ուստի, մենք այս հաղորդմամբ փորձում ենք ներկայացնել այն ամենը, ինչը կարելի է կապել տարածաշրջանից հեռացածների և հետագայում այդտեղ բնակություն հաստատածների մշակութային ժառանգության հետ:

Տարածաշրջանին բնորոշ հիմնական տիպերը, դրանց ծագումնաբանությունն ու տարածման արեալները: Պատմամշակութային ու ժողովրդագրական վերը տրված համառոտ բնութագիրը թույլ է տալիս տարածաշրջանի գորգերի ուսումնասիրման ու տիպաբանման հարցում հանգել որոշակի ելակետերի: Ըստ այդմ, Սևանի ավազանի գորգագործական կենտրոններում ընդունված ավանդույթները մենք բաժանել ենք երկու հիմնական խմբի՝

ա/ Տեղական վաղ ավանդույթներ,

բ/ Արևմտյան Հայաստանից բերված ավանդույթներ:

Տեղական վաղ ավանդույթներ ասելով նկատի ունենք գորգագործական մշակույթին վերաբերող, գորգերի գեղազարդման հետ առնչվող այն սկզբունքները, որոնք կային խնդրո առարկա տարածաշրջանում նախքան բնիկների հեռանալը: Ուստի, այս առումով առաջնային նշանակություն ունեն վերն ասված պատկերային սկզբնաղբյուրներն ու Արցախում և Գարդմանում, մասնավորապես Մելիք -Շահնազարյանների բնակության հետագա վայրերում, հայտնի գորգերի ու կարպետների տիպերը: Մենք այս պարագան կարևորում ենք հատկապես այն պատճառով, որ մելիքական տներում գոյություն են ունեցել սեփական կարիքների հոգման համար անհրաժեշտ արհեստանոցներ, ու, բացի այդ էլ,

---

[15] ***Բակուր***, Գյուլիստան Նամե, գիրք առաջին, Մեծ Կուանք /մթ750-մթ1828թ/, Եր., 2005, էջ 127, 134, 151, ***Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց***, Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Եր., 1999, էջ 209:

[16] ***Վ. Ա. Խոջաբեկյան***, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը. Եր., 1979, էջ 29: ***Г. Г. Саркcян,*** Население восточной Армении в XIX – начале XX в., Ер., 2002, с. 92: Այս իրադարձությունների մասին ավելի մանրամասն տես՝ ***Հ. Հարությունյան,*** նշվ. աշխ., էջ 121 -154:

Գորգ «Բագրևանդ», Գեղարքունիք, 19-րդ դ. վերջ /պատկ. 5/:

հենց մելիքի աղջիկներն ու հարսները իրենք էլ զբաղվել են գորգագործությամբ[17]: Գորգագործական մշակույթի ուսումնասիրումը ցույց է տվել, որ, սովորաբար, մերձակա գորգագործական կենտրոններում գործել են հիմնականում միևնույն տիպի գորգեր ու կարպետներ, ուստի, Գեղարքունիքի գորգագործական ավանդույթներն էլ առանձնապես շատ չպետք է տարբերվեին Արցախյան ու հատկապես Գարդմանի, Ծարի ու Քաշաթաղի գորգագործական ավանդույթներից: Դրան մի կողմից էլ պետք է նպաստեր վերն ասված իշխող տոհմի կատարած տեղաշարժերը: Նկատի ունենալով այդ ամենը, կարծում ենք, որ մինչ 17-18-րդ դարերը Գեղարքունիքի գորգագործական կենտրոններին բնորոշ էին մեր կողմից *«Ամարաս», «Ջրաբերդ - վիշապագորգ», «Ջրաբերդ», «Ջրաբերդ - Վարանդա», «Վահան», «Տավուշ», «Մասյացոտն», «Սիսական», «Վայք» /պատկեր 2/, «Ոսկանապատ» /պատկեր 3/, «Գլաձոր»*[18], անվանակոչված տիպերին պատկանող գորգերը, որոնք 19-րդ դ. վերջերից, Կովկասյան տնայնագործական կոմիտեի ծավալած աշխատանքների շնորհիվ կրկին սկսեցին լայն տարածում ստանալ տարածաշրջանի գորգագործական կենտրոններում[19]:

Հարկ ենք համարում շեշտել, որ 19-րդ դ. վերջից ու 20-րդ դ. սկզբներից սկսված ապրանքային արտադրության գորգերը գործում էին պատրաստի տեխնիկական նկարների օրինակով: Միևնույն գունային լուծումներով ու տեխնոլոգիական հատկանիշներով բնորոշվող տարատեսակ տիպի գորգեր գործում էին Անդրկովկասում արդեն լայն տարածում ստացած բոլոր մանուֆակտուրաները: Ըստ էության, դրանք շատ չէին տարբերվում տեղական ավանդույթներից, որոնք շարունակում էին մանուֆակտուրաներից դուրս գտնվող գորգագործուհիները: Այս հանգամանքների շնորհիվ էլ բավականին դյուրին է տարբերակել Արևմտյան Հայաստանի գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթներով գործված գորգերը՝ այնքանով, որքանով որ վերաբնակիչները գորգերը գործում էին իրենց բնակության նախկին վայրերում արմատացած տեխնոլոգիաներով:

Այդ ամենը հաշվի առնելով, մեր նախնական հետազոտությունների ընթացքում հնարավորություն ենք ունեցել տարածաշրջանում տարածում ունեցած տարատեսակ գորգերից առանձնացնել վերաբնակիչների բերած գորգերի մի

---

[17] ***Եր. Լալայան***, Վարանդա, Գանձակ.-Երկեր հինգ հատորով, հատոր 2, Եր.,1988, էջ 202-486

[18] Մեր առաջարկած տիպերի անվանումների մասին տես՝ Հայոց գորգագործական մշակույթը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին.- Հայոց ազգային մշակույթի ատլաս, երկրորդ հատոր, էջ 171-172, Եր., 2009:

[19] ***«Վահան»*** տիպի գորգերն այս տարածաշրջանում հայտնի են «Խաչ-խալիչա» անվանումով, տես՝ ***Տ. Մկրտչյանի*** արխիվ, էջ 26:

շարք տիպեր: Դրանց թվումն են մեր տիպաբանությամբ **«Կոգովիտ»** /պատկ. 4/, **«Բագրևանդ» /պատկ. 5/** ու **«Աղբակ»** /պատկ. 6/ անվանակոչված տիպի գորգերը: Դրանցից առաջինը գորգի տեղական առևտրականների շրջանում էլ հայտնի էր **«Բայազետ»** անունով, որն էլ ըստ էության մատնանշում է այդ տիպի բայազետյան ակունքները ու այդ հանգամանքը հիմք ընդունելով էլ, մենք շրջանառության մեջ ենք դրել **«Կոգովիտ»** պատմական տեղանունը: Այս տիպի գեղազարդման հիմնական տարրը կեռիկազարդ, երկայնաձիգ բազմանիստ շրջանակ է, որը գեղազարդվում է տարատեսակ զարդերով ու պատկերներով: Մյուս՝ **«Բագրևանդ»** տիպի գեղազարդման համակարգի բնորոշիչը ատամնազարդ համակենտրոն շեղանկյուն զարդերից կազմված հորինվածքն է, որը ներկայացվում է մեկ կամ երկու երկայնակի շարքով ու դրա տարբերակներն էլ /այդ թվում կարպետի տեսքով/ լայնորեն հայտնի են նաև Բագրևանդի, Բասենի ու Ալաշկերտի գորգագործական կենտրոններում:

Գորգ «Աղբակ», Գեղարքունիք, 20-րդ դ. սկիզբ /պատկ.6/:

Ընդհանուր առմամբ, **«Աղբակ»** տիպը կարելի համարել համահայաստանյան տարածում ունեցած տիպ: Սակայն Գեղարքունիքում գործված այդպիսի մի գորգ, որը պահվում է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում /պատկ. 6/, իր գեղազարդման համակարգի սկզբունքներով նկատելիորեն տարբերվում է հարևան գորգագործական կենտրոններին բնորոշ բուսածաղկային համանման հորինվածքով գեղազարդվածներից[20]: Այս դեպքում գորգադաշտը բաժանված է հավասարաչափ շրջանակների, որոնցում էլ ամփոփված են վարդակները: Ընդհանուր առմամբ, այն ավելի մոտիկ է հյուսիս-արևմտյան Իրանի գորգագործական կենտրոններին բնորոշ պարտեզային գորգերին, որն էլ թույլ է տալիս մեզ այն դասել վերաբնակիչների բերած գորգերի տիպերի թվին:

Սահմանափակվելով այսքանով, նշենք, որ, բնականաբար, Գեղարքունիքում գործում էին նաև համահայաստանյան տարածում ունեցած տիպերին պատկանող գորգերի նմուշներ:

О ТРАДИЦИЯХ КОВРОТКАЧЕСТВА ГЕГАРКУНИКА

А. А. Погосян
Т. В. Мкртчян

Археологические и историко-этнографические материалы показывают, что в регионе еще в эпохе бронзового века были достаточно развиты навыки ткацкого, в том числе и ковроткацкого дела. Это продолжалось и в следующие эпохи, о чем свидетельствуют Норатусские хачкары, на которых встречаются ковровые изображения. Для выявления исконно гехаркуникских ковров некоторые

[20] Գեղազարդման այդ նույն սկզբունքներով բնորոշվող գորգեր պահվում են Գավառի երկրագիտական թանգարանում:

трудности представляют демографические особенности региона, которые там образовались в результате оттока местных армян в течение второй половины 18-ого века и переселения туда армян из Западной Армении, в частности из Баязета, Диадина и Алашкерта, начиная с 1830 года. Учитывая эти факторы и основываясь на имеющихся этнографических и музейно-архивных материалах, мы выявили примерно тридцать типов гехаркуникских ковров и выделили их на две группы: а/ ковры местного происхождения и б/ ковры западно-армянского происхождения.

ABOUT CARPET - MAKING TRADITIONS OF GEGHARKUNIK

A. A. Poghosyan
T. V. Mkrtchyan

Arxeological and historical-ethnographic data confirm, that since the Bronz Age there certain abilities of carpet-making culture in region already existed, which had reached to much higher levels of development later on. In addition to other arguments, the fact is also confirmed by carpets found on khachqars in Noratus. However, there exist some problems in disclosure of traditional carpet-making culture of Gegharkunik, which are connected with the Armenian flowing off from the region in second half the XVIII century, as well as the historical-cultural peculiarities of those, having resettled there from Bayazet, Diadin and Alashkert since 1830s. In view of the above-mentioned, we have found out over thirty (30) patterns of carpets typical to Gegharkunik region, which we have divided into two groups, according to tho genetics: a) local ones, and b) those, brought from Western Armenia.

ՍՈՒԲԱՐՏՈՒ ԵՐԿՐԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա . Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սուբար (շում. Su-bir$_4$ /Subar/ Šubur կամ Սուբարտու, աքքադ. Šubartum, Subartum/ ina Šú-ba-ri, ասուր. mât Šubarri) երկիրը, որը հիշատակվում է աքքադական և ասուրական տեքստերում, սովորաբար տեղորոշվում է Բաբելոնից հյուսիս՝ Տիգրիս գետի վրա: Ամառնայի արխիվի վավերագրերում հանդիպում է նաև Սուբարի ձևը, իսկ ուգարիտյան արձանագրություններում՝ Šbr[1]:

Ըստ Թուկուլթի-Նինուրտա I-ի արձանագրության (մ.թ.ա. XIII դ. վերջ)՝ Ասորեստանի արքան իր գահակալության առաջին տարում արշավանք է կազմակերպում դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք՝ հնազանդեցնելով կուտիներին, ուկումանեցիներին, էլխունիան, Շարնիդան, Մեխրին, իսկ այնուհետև սուբարեցիների ընդարձակ երկիրը՝ Կատմուխին, Պուշշին, Մումմին, Ալզին, Մադանին, Նիխանին, Ալայան, Թեբարզին, Պուրուլումզին[2]: Թուկուլթի-Նինուրտա I-ի մեկ այլ

[1] www.Wikipedia.org/ Субарту

[2] Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), ВДИ, 1951, N 2 (3).